ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառը՝ *վ* կամ *ֆ*:

Թա_շյա, թա_շածաղիկ, կա_ագործ, նա_թ, նա_, ա_ղանցի, նզո_ք, թո_չանք, Աղ_անք, աս_ալտապատ, _22ալ, ս__ինքս, ա_տոմեքենա, Ա_ստրիա, ո_քեր, Ա_ղանստան, օ_, _22ալ, Սիր_արդ, օ_կիանոս, գա_իթ, կատ_ածաղիկ, կտա__ատ, Եթո_պիա, զա_թիչ, տա_ղահար անդրա_արտիք, Ա_րիկա, Ա_րոդիտե, գո_ք, խա_իծ, խոռ_կան, կա_ճաման, հարա_ային, հա_ք, դափնե_արդ:

2. Նախորդ առաջադրանքի բառերը խմբավորի՛ր ըստ *վ* կամ *ֆ* բաղաձայնի գրության:

Վ	Ֆ

3. Կազմի՛ր նախադասություններ *գովք*, *թավշյա*, *նավթաբեր* բառերով:

4. Արտահայտի՛չ կարդա զրույցը և հարստացրո՛ւ երկխոսություններով:

Գիտե՞ք, որ ամաչկոտ բնությունը հովտաշուշանին ստիպում է թաքնվել խիտ սաղարթների մեջ: Հաճախ հովտաշուշանի հատապտուղները դառնում են նարնջագույն կամ կարմիր: Ծաղիկը շատ է տխրում, երբ հրաժեշտ է տալիս գարնանը: Արցունքները հոսում են նրա աչքերից: Ամռան վերջին նրա սիրտը չի դիմանում, և արյունը հուսում է՝ գունավորելով ծաղիկները: Խոտերի վրա թափված ուլունքները վերածվում են կարմիր և բուրավետ ծաղկաբույլերի: Անտառի թզուկներն այս ծաղիկներն օգտագործում են որպես լապտերներ: Ըստ իտալական զրույցի՝ մի գիշեր գեղեցկուհի Դիանան հայտնվում է անտառում: Այնտեղ ապրող հովտաշուշանները փորձում են բռնել նրան: Արագ ու երկար վազքից աստվածուհու մարմ-

նի վրա հայտնվում են քրտինքի անուշաբույր կաթիլներ, որոնք, դիպչելով պտուղներին, վերածվում են անուշահոտ ծաղիկների: Իսկ բրիտանացիները հովտի շուշանը համարում են մաքրության խորհրդանիշ:

5. Լրացրո՛ւ բաց թողնված տառը՝ *վ* կամ *ֆ*, և տեքստը համալրի՛ր հերոսներով (զույգային աշխատանք):

Ա_տոմեքենան ընթանում է հարա_այինաս_ալտապատ ճանապարհներով՝ հազի_ հազ հաղթահարելով ոլորանները: Յուրահատուկ թո_չանք ունեն այդ վայրերը: Թեև հեռու չեն նա_թահանքերը, սակայն բուսական աշխարհը հարուստ է ու տարատեսակ: Ահա թա_շյա հո_տաշուշանները, կտա_ատի արտերը, գունավոր հա_քերը, որոնք ասես մայր բնության գո_քն են երգում: Աջ կողմից թափվում է աղմկոտ մի ջր_եժ: Ահա և օ_կիանոսը: Այն հիասքանչ է և՛ խաղաղ ժամանակ, և՛ խռովքի պահին: Ափին՝ եթո_պացիներ, ա_ղանցիներ, խա_շիկներ: Հա_անաբար պատրաստվում են զբոսանքի գնալ: